ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽԻ Ռ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Նաիրի համայնք ,գ. Քասախ Ս. Ջալալյան 1
Էլ.փոստ՝ qasaxdproc@mail.ru 094911602

04 դեկտեմբերի 2023թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Ֆոտոն» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ն. Պետրոսյանին

Հարգելի **Ն. Պետրոսյան**

«Քասախի Ռ.Գևորգյանի անվ. №1 միջն. դպրոց» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի օգոստոսի 25-ին կնքված **ԿՄՔԴ-ԳՀԱՊՁԲ-23/2-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, որոնց մատակարարման ժամկետը Պայմանագրով սահմանված է՝ Պատվիրատուից պատվերը ստանալուն 3 աշխատանքային օրվա ընթացում:

2023թ.-ի նոյեմբերի 20-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է պատվեր՝ պահանջագիր ԿՄՔԴ-ԳՀԱՊՁԲ-23/2-1 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների որոշակի քանակությամբ մատակարարման համար, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում մասնակցի կողմից մատակարարումը թերի է իրականացվել:

2023թ.-ի նոյեմբերի 28-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է ծանուցում՝ վերոնշյալ թերի մատակարարված ապրանքները ամբողջությամբ մատակարերլու մասին, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Քասախի Ռ.Գևորգյանի անվ. №1 միջն. դպրոց» ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ.-ի դեկտեմբերի 04-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (**ՀՀ ՖՆ ԳՎ Հ/Հ 900118000224**):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում կայացնել:

«Քասախի Ռ.Գևորգյանի անվ. №1 միջն. դպրոց» ՊՈԱԿ -ի

Տնօրեն՝ **Ք.Սարգսյան**